ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**« 24» հունիս 2021թ.** **N 82-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀՐԱՏԱՊ և ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ԿԱՐԻՔՆԵՐԸ ԲԱՑԱՀԱՅՏԵԼՈՒ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁԱՆԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-կետի, 3-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 29.04.2021 թվականի N 700-Ն որոշման դրույթներով*

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

*1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի սոցիալապես անապահով բնակիչների հրատապ և անհետաձգելի կարիքները բացահայտելու, գնահատելու նպատակով ստեղծել հանձնաժողով և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:*

*2. Հանձնաժողովին՝ ուսումնասիրել սոցիալական ծանր վիճակում գտնվող կարիքավոր ընտանիքների առաջնահերթ և հրատապ լուծում պահանջող խնդիրները, փաստաթղթավորել, կատարել տնային այցելություն և ներկայացնել առաջարկություններ դրանց լուծման ուղղությամբ:*

*3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:*

6/24/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

*Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ*

*Հավելված՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի*

*2021թ. հունիսի 23-ի թիվ 82- Ա որոշման*

*ՀՀ Վայոց ձորի մարզի սոցիալապես անապահով բնակիչների հրատապ և անհետաձգելի կարիքները բացահայտելու և ուսումնասիրելու նպատակով ստեղծված հանձնաժողովի անհատական կազմը*

*1. Վասիլ Ասլանյան - մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ (հանձնաժողովի նախագահ),*

*2. Ցոլիկ Բաբայան - մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար),*

*3. Արմեն Դավթյան - մարզպետի խորհրդականի ժամանակավոր պաշտոնակատար,*

*4. Արամ Գրիգորյան - մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ,*

*5. Ռուբիկ Մինասյան - մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ:*